Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Թարգմ.
ՎԱՂԷՐՇԵԿ ԹՈՒՄԱՆԵՆ

452

Վ. Ի.
ՆԵՄԻՐՈՎԻՉ-ԴԱՆՉԵՆԿՈ

№ 3.

ԿԵՆԴԱՆԱՅԱԾ ԵՐԳԸ

ՊԱՏՄՈՒԱԾՔ.

891.71
Ա-52

ԳԻՆՆ է 10 Կ.

ԲԱԳՈՒ
Տպարան Ե. Գ. Գիլբաաարեանի
1905.

346 5558

30 OCT 2006

Վ. Ի. ՆԵՄԻՐՈՎԻՉ-ԴԱՆՉԵՆԿՈ.

891-71
Ն-52 սր

ԿԵՆԴԱՆԱՅԱԾ ԵՐԳԸ

ՊԱՏՄՈՒԱԾՔ

1002
5395

Հազար փառք նրանց, որոնք աշխատանք
Չեն խնայել երբէք գթառատ հողին,
Ով բանուկ մեղու գործել է անհագ
Եւ ոչ ձրիակեր ծնուել փեթակին...

Թարգմ.
Վաղարշակ Թումանեան։

№ 3.

Հ.Ս.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Դ. Публичная Библиотека
7/XI—1922
Ալեքս. Մասի անվան

ԲԱԳՈՒ
Տպարան Ե. Դ. Գիլբասարեանի
1905.

11.07.2013

12325

Дозволено Цензурою Тифлисъ, 17 Іюля 1904 г.

25 NOV 2010

ԿԵՆԴԱՆԱՑԱԾ ԵՐԳԸ

«Աղօթեցէ՛ք արքական երգիչ,.. (անունը ջնջուած է)հոգու համար: Ստորերկրեայ բանտում նիւգ տարի բանտարկուած մնալուց յետոյ, նրան, իւր ազատման օրը, գտել էին մեռած, ժպիտը դէմքին. որովհետեւ Աստուած այցելել էր կալանաւորին իւր բանտումը»:

(կալիբրիայում, Ղօժեր բազաւորի ամրոցում գտնուող մի հին գերեզմանատարի արձանագրութիւնն, որը գտնուել էր հեղինակի այնտեղ եղած ժամանակը):

I.

ԳԵՏՆԱԽՈՐՇՈՒՄ:

Նա յիշում է, շատ լաւ յիշում այն ըոպէն, երբ իրան բերին այստեղ: Այն ժամանակուանից սկսած, անթափանցելի խաւարի մէջ իմի էին ձուլւել օրերն ու շաբաթները, ամիսներն ու տարիները և միայն այդ ըոպէն էր պարզ ներկայանում նրան: Նա չէ մոռացել հնադարեան ամրոցի սալայատակ բակը, որ այն առաւօտ

այնպէս պայծառ լուսաւորուած էր արեգակի անթիւ փայլուն ճառագայթներով, սրբազան խաղաղութեամբ շնչող կապտագոյն երկնքի անյատակ խորութիւնը և կարմիր, բոցաւառ ծաղիկներով զարդարուած ծառերը։ Նրա յիշողութեան մէջ դեռևս կենդանի է այդ ծաղիկների դուրեկան հոտը, որոնք կարծես թէ զգալով, որ նա այլևս չէ տեսնելու իրանց, թափում էին իրանց քնքոյշ թերթիկները նրա ոտքերին, երբ նա անցնում էր նոցա տակից շրջապատուած լուռ ու մտախոհ պահապաններով... Կարծես հիմա էլ նա լսում է, թէ ինչպէս աղմկում էին իւր քայլերի ձայները քարէ սանդուխտների վրայ։ Կարծես հիմա էլ նա տեսնում է այն անվերջ միջանցքները, որոնցով անց էին կացնում իրան և ամենավերջին միջանցքում,—նա շատ լաւ յիշում է նրան,—մի լուսաւոր կէտ։ Այնտեղ, դարևոր ժայռի կարծր մարմնի վրայ, մի փոքրիկ անցք էր բացուած դէպի դուրսը.,. Հասնելով այդ անցքին, նա կանգնեց. կանգնեցին և պահապանները, կարծես հասկանալով, որ նա կամենում է աշխարհից բաժանուելուց առաջ, վերջին անգամ մնաս բարև ասել լոյսին, ազատութեանը, երկնքին, կեանքին և երգին. երգին, որի համար էր նա մինչև այժմ ապրել, շնչել։

Ծովի կողմից փչող թեթև զեփիւռը շարժում էր նրա մազերը, թարմ օդը զարնուում նրա

երեսին, փայփայում դէմքը։ Նա նայում էր հեռուն, անծայր ծովին, որի վրայ կապտին էր տալիս պարզ, անամպ երկինքը։ Մի ինչ որ թռչուն, սև կէտի պէս թռչկոտում էր այնտեղ ազատ, համարձակ. կարծես իւր թևերի ուժեղ թափերով հորիզոնի անսահմանութիւնն էր չափում... Ներքևում, հազիւ նշմարելի կէտեր ակոսում էին ծովի մակերևոյթը և թեթև զեփիւռը տարուբերում էր նրան։ Ահա հեռուում երևաց սպիտակ առագաստները պարզած նաւակը... Կարծես, իւր թևերը տարածած, ձկնկուլն էր լողում այնտեղ։

— Ժամանակ է, լսեց նա իւր յետևում և ուսի վրայ զգաց ամբողջովին պողպատի մէջ կորած զինուորի ձեռքը։

Նա յիշում է, շատ լաւ յիշում այն վերջին վայրկեանները... Քարափի ծայրին հանդարտ օրօրուում էր մի ինչ որ վարդագոյն ծաղիկ։ Այնտեղ հասնող անձրևի կաթիլները սնունդ էին տալիս ծաղկին, իսկ արեգակի ճառագայթները կարմրեցնում էին նրա ատամնաձև թերթիկները... Բանաստեղծը մեկնեց դէպի նա իւր ձեռքը, որպէսզի պոկէ և տանէ իւր հետ աշխարհի այդ վերջին յիշատակը։ Բայց նա խղճաց ծաղկին, չկամեցաւ իւր հետ միասին թաղել նրան ստորեկրեայ խուցի անվերջ, անձայն խաւարի մէջ... Բանտի դռների մօտ, նոյն ծեր, մտախոհ զինուորը, չկարողանալով ծած-

կել իւր յուզմունքը, ընդհատուող ձայնով ասաց նրան.

— Ներիր, ինձ հրամայուած է վերցնել քո տաւիղը։

Աւելի լաւ էր խլէին նրա հոգին, քան թէ տաւիղը։ Նրա հետ միասին, թանկագին ընկերոջ պես կրծքին սեղմած, նա գնում էր դէպի իւր բանտը։ Նա կարծում էր, որ տաւիղի լարերի քնքոյշ ձայները կամոքէին իւր տանջանքները և միայնակութիւնն այնքան էլ զգալի չէր լինիլ։ Նա բարձրացրեց զինուորի վրայ իւր ցաւատանջ, տխուր աչքերը, աղերսող հայեացքով նայեց նրան. բայց իսկոյն յիշեց, որ նա սովոր է միայն հրամաններ կատարելու և բարձրացնելով ւիր անզուգական ընկերոջը, ժայռին զարկեց... Ջարդուեց տաւիղը և նրա լարերը մի վերջին անգամ տխրաձայն գեղգեղուեցին, կարծես լաց էին լինում... Ցետոյ հաւաքելով նրա փշրանքները, տուեց զինուորին և կարծես թէ նրա հետ միասին իւր սրտից մի ինչ որ բան պոկուեց... Պոկուեց և մինչև այժմ էլ տեղը ցաւում է, թէև այն ժամանակուանից անցել են երկար, շատ երկար տարիներ...

Ծանր, երկաթէ դուռը ճռնչալով բացուեց իւր ժանգոտած հանգոյցների վրայ։ Ծեր զինուորը վառեց ջահը և նրա կարմրագոյն բոցերի արտացոլման տակ երևացին խաւար, խոնաւ սանդուխտի աստիճանները, որոնք հետզհետէ

աւելի և աւելի խաւարում էին մինչև որ բոլորովին կորչում, անհետանում անթափանցելի մթութեան մէջ... Այնտեղ, ներքևում սևին էր տալիս կլոր, հաստ քարէ սիւնը, որի վրայ թառած էին բանտի հատաքարէ կամարները։ Կալանաւորը գլխիկոր սկսեց իջնել աստիճաններից, իսկ նրա յետևից, վառուող ջահը ձեռքին բռնած, գնում էր ծեր զինուորը։ Ջահի բոսորագոյն լոյսից, միմիանց յետևից լուսաւորւում էին կամ ծեղքուած սալայատակը, կամ սև, խոնաւ պատերը և կամ մոխրագոյն սիւնը, որի վրայ ինչ որ թաց ճիճուների հետքերի պէս, սողում էին հազիւ նշմարելի կաթիլներ։ Վերջապէս ջահի լոյսը ընդգրկեց պատերից մէկի տակ դրուած քարէ նստարանը։

— Ես ջահը կըթողնեմ,—ասաց ծեր զինուորը։—Մնաս բարով։

Եւ նա ամրացրեց նրան սիւնի վրայ գտնուող երկաթէ օղակի մէջ...

Բանտարկեալը շրջուեց... Նա տեսաւ, թէ ինչպէս միմիանց յետևից սանդուխտների աստիճաններից բարձրանալով, հեռացան զինուորները, շրխկշրխկացնելով իրանց թրերը և պողպատէ զրահները, տեսաւ, ինչպէս ցաւալի կերպով ճռնչալով բացուեց դուռը, որի միջից ներս թափանցեց արեգակի փայլուն լոյսի մի շերտ և մի ըոպէ լուսաւորեց գետնախորշը։ Այդ շերտի միջից նա տեսնում էր հեռացող զինուորների

զատկերները։ Մէկ, երկու, երեք... Վերջինը չերջեց դեպի նրան, բայց իսկոյն և եթ դարձեալ լսեց փակուող դռան ճռնչոցը և կալանաւորի համար խաւարեց օրւան լոյսը... Խաւարեց ընդմիշտ, հաւիտեան...

Նա ուժաթափ ընկաւ իւր նստարանի վրայ և այրուող դէմքը սեղմեց սառը քարին, կարծես միայն նրանից էր գթութիւն հայցում։ Միայն այդ նստարանն էր մնացել նրան ամբողջ աշխարհում... Նա գիտէր, որ այնտեղ, վերևում, անխիղճ բռնակալը գթութիւն չըգիտէ։ Չափազանց բարձր էր հնչել երիտասարդ երգչի դատապարտիչ երգը և չափազանց ուշադիր էին լսել նրան գիւղի տանջւած վասսալները։ [1]) Այն գիւղի, որի վրա փառահեղ ամրոցը իւր խիստ տուերն էր տարածել։ Երգիչը վաղուց էր նկատել, թէ ինչպէս էր կնճռւում իւր պարոնի ճակատը, երբ նա, փոխանակ նրա քաջագործութիւնները գովելու, սքանչացած երգելու գիշատիչ բազէների մասին, որոնք իրանց պողպատէ ճանկերով անխղճորէն հոշոտում են խղճուկ թռչունների մարմինները, նա, վիշտ ու տանջանքներով լի երգերով, գթութիւն էր հայցում դէպի նոցա, որոնք տանջւում էին քառաժայռի ստորերկրեայ բանտերում, փառաբանում էր աշխատանքի սրբութիւնը և, սլանալով դէպի

[1]) Վասսա՝—հպատակ։ Թագաւորի վասսալներ համարւում են նրա հպատակ ժողովրդները։ Հողատիրոջ վասսալներ՝—նրա ճորտերը։

հեռու ապագան, սկսում էր կենդանարար օրհներգը։ Այսօր առաւօտեան էլ, հնագարեան ամրոցի մեծ դահլիճում, յիշելով երեկւայ արշաւանքը գիւղի վրայ, երգիչը մի անգամ էլ զգաց իւր կրծքում Աստուածային հուրը, ձեռքն առաւ տաւիղը և, երբ շողոքորթ քարոզիչը վերջացրեց իւր գովասանական ճառը, երգեց մի երգ, որի իւրաքանչիւր ելևէջի մէջ արիւն էր զարկւում, իրաքանչիւր ակկորդում,—փոթորկի պէս հաւիտենական դատավճիռ հնչում։ Նա յիշում է թէ ինչպէս վերջացրեց երգը.

Հազար փառք նրանց, որոնք աշխատանք
Չեն խնայել Տրբէք գթառատ հողին,
Ով բանուկ մեղու՝ գործել է անհագ
Եւ ոչ ձրիակեր ծնել փեթակին։
Ագնիւ աշխատանք բերում է գործին
Հունձ աջող դաշտից և ծողովրդին
Հպարտ, համարձակ, ազատ ոգի, օր.
Կորով՝ կռւի մէջ, տանն՝ կեանք անդորը... [1])

. . . . . .

Վերջացնելով և նայելով իւր սինիօրի [2]) կատաղութեամբ փայլող աչքերին, նա զգաց որ իրան այլևս փրկութիւն չ'կայ։ Նա մի բոպէ դուրս եկաւ մնաք բարև ասելու ազատ օդին, փայլուն արեգակին, իսկ նրա յետևից արդէն

[1]) Թարգմանութիւն Դ. Տէր-Դանիէլեանցի։
[2]) Սինիօր՝--պարոն, տէր։

շարժուում էին իրանց տիրոջ հրամանին հնազանդ զինուորները։

II.

ՋԱՀԸ.

Երբ նա զարթնեց, նրա առաջին հոգսը ջահն էր, որի կարմրագոյն լոյսը կամաց—կամաց խլում էր խաւարից բանտի մութ անկիւնները։ Այդ լոյսը, ինչպէս մի կենդանի արարած, շարժուում էր, մերթ ընկնում պատերի ճեղքերի մէջ, որտեղ հանդարտ, անձայն ընկնում էին վերևից իջնող ջրի կաթիլները, մերթ փայլում լայն շրջաննեռով, —երբ կրակի բոցը անշարժ էր մնում։ Կալանաւորը ահ ու դողով նայում էր այդ լոյսին։ Նա գիտէր, որ նրան կըյաջորդէ անվերջ, սոսկալի խաւարը և, իւր հոգու ամբողջ զօրութեամբ, ցանկանում էր երկարացնել կրակի հիւանդոտ, երերուող գոյութիւնը... Բանաստեղծը չէր կամենում նոյն իսկ գիտել իւր խուցը, կենդանի սեռածների այդ գերեզմանը, որպէսզի օդի տարուբերուելը չ'խլէ ջահի գոյութեան մի քանի վայրկեանները։ Նա, ամբողջ ժամերով այդպէս անշարժ նստած, նայում էր ջահի կարմրագոյն բոցին, որը գնալով—գնալով ծխի երկար, անվերջ շերտի էր փոխուում և գնում կորչելու գետնախորշի մութ կամարների տակ... Քանի որ

հնագարեան ճեղքված սիւնի վրայ ամրացրած օղակի մէջ վառւում էր այդ ջահը, բանտարկեալը միայնակ չէր։ Իսկ երբ նա հանգչէ, գետնախորշում կըմնայ միայն կալանաւորը, նման այն պատմական անիծեալ ոգուն, որը աներևոյթ այժով գամված էր ժայռի կրծքին։ Այն ժամանակ միայն կըսկսեն բանտարկութեան սոսկալի ժամերը։ Եւ խղճուկ բանաստեղծը լայն բացված աչքերով հետևում էր կարմիր բոցի բորբոքումներին, ցաւելու չափ զարկւող կրծքով լսում էր ջահի միջի խէժի փչչոցը և վախվխելով նայում յատակի ու առաստաղի լուսաւոր շրջանակներին՝ արդեօք չեն փոքրանում նոքա, չեն անյայտանում... Նա, ինչպէս իրան սպասող կառափնարանը նկատած յանցաւոր, հաշւում էր բոպէները, վայրկեանները, կսկիծով նկատելով այն արագութիւնը, որով յաջորդում էին նոքա միմեանց։

Եւ այդ սրտամաշ վախի միջից առաջ էր եկել մի ուրիշ զգացմունք ևս...

— Ինչու համար,—կրկնում էր նա ինքն իրան։—Ինչու համար։

Եւ իւր ամրողջ կեանքը օրէցօր, բոպէ առ բոպէ, անցնում էր նրա աչքերի առջևից, լուսաւորւած այդ բոսորագոյն կրակի արտացոլումով։ Կրակի, որը բանտի սրտամաշ լռութեան միջից աւելի բարձր, աւելի ազդու էր հնչում նրա հոգւում։ Նրան սովորեցրել էին ծառայելու ճշմար-

տութեանը և նա ծառայում էր նրան... Նրան սովորեցրել էին հաւատարմութեամբ ծառայելու իւր տիրոջը և նա ոչ մի անգամ չէր դաւաճանել նրան։ Ընդհակառակը, նախաձեռնելով նրա փառքին, նա երգում էր նրա համար ճշմարտութիւնը։ Նա երազում էր տեսնելու նրան ոչ միայն ուժեղ և սպառնալի,—այլ և բարի, գթառատ։ Նա գիտէր, որ դրսից, այդ գորշագոյն բարձր և հաստ պատերի միջից, իւր երգը հասնում է այնտեղ, Հնագարեան ամրոցի մութ դահլիճները և նա աւելի շուտ կմեռնէր, քան թէ թոյլ կըտար իւր երգի, ճշմարտութեան այդ միակ համբաւաբերի մէջ, շողոքորթութիւն հնչէր։

Ի՞նչպէս լռեր, երբ ներքևում մխում էին սիւզերենի [1]) չար և անգութ ծառաների ձեռքով հրդեհված գիւղերը, երբ նոցա ձիաների սմբակները անխնայ կոխկրտում էին խաղաղ գիւղացիների արտերը, երբ ճանապարհները, իրանց անանցանելիութեան պատճառով, մացառներով էին ծածկւում, երբ կոյսերի պատիւը և ծերունիների ճերմակները աւելի էժան էին գնահատւում, քան այժին ծառայող կեղծաւոր բարոզիչների ճարտարախօսութիւնները և երբ յաղթական չարութիւնը իւր անխնայ ալիքներով աւելի ու աւելի լայն էր ընդգրկում շուրջը

[1]) Սիւզերեն՝--իշխանաւոր։ Իշխանների համար սիւզերեն թագաւորն էր, գիւղացիների համար՝--նոցա կալւածատէրը։

ամեն բան...

Աստուած դրել էր նրա մէջ երգի ոյժը... Եւ, իւր հոգու ամբողջ զօրութեամբը, բանաստեղծը ծառայում էր նրան որքան կարող էր...

— Ախը ինչու համար, ինչու,—կրկնում էր նա անդադար ինքն իրան, վշտալի աչքերը հետզհետէ դունատուող կրակին հառած, որի բոսորագոյն լեզուակը աւելի և աւելի փոքրանում էր և նրանից տարածուող ծխի շերտը աւելի և աւելի խտանում, իսկ իւր շուրջը, խաւարը աւելի ծանրանում էր, ամեն րոպէ պատրաստելով կուլ տալու կրակի այդ փոքրիկ լեզուակը և կալանաւորի բորբոքուող աչքերը ծածկելու հաւիտենական խաւարով։ Բանտի անկիւններում այլևս չէին տարուբերուում ստուերներ և լոյսի արտացոլումները չէին թափառում այնտեղ։ Այնտեղ խաւարն էր թագաւորում։ Հանդարտ փչում էր մարող ջահի խէժը։ Կալանաւորը հասկացաւ, որ կրակը մարում է. մարում է, իւր վերջին ծառայութիւնը մատուցանելով նրան։ Երբէք ոչ ոք այնպէս սրտամաշ վշտով չէր սպասել իւր ընկերոջ վախճանին, այնպիսի սոսկումով չէր սպասել թէ երբ կրգայ մահը և իւր սառը ձեռքերով կրգրկէ նրա դեռևս տաք մարմինը,—ինչպէս նա էր հետևում կրակի վերջին ճիգերին մէկ էլ վառելու, մէկ էլ լուսաւորելու նրա հաւիտենական խուցի խաւարը։ Եւ երբ երկար բորբոքելուց յետոյ կրակը, շարունակ ճարճատե-

լով, շարունակ կարմրելով, վերջապէս հանգաւ, քարացած դեռնախորշը առաջին անգամ լսեց կալանաւորի հեկեկանքը...

Տիրեց անշարժ և խեղդող խաւար։ Միայն, փակելով իւր աչքերը, երգիչը դեռևս տեսնում էր ինչոր փայլուն կէտեր և գծեր։ Իսկ երբ նա բացում էր աչքերը, նրան չորս կողմից ընդգրկում էր սարսափելի, անվերջ ոչնչութիւն։

III.

ԿԵՆԴԱՆԻ ԹԱՂԻԾԸ.

Օրերն անցնում էին օրերի յետևից, շաբաթները—շաբաթների և ամիսները—ամիսների։ Նա չգիտէր թէ երբ է ծագում փայլուն արևը և երբ մայր մտնում։ Այն վայրկեանից, երբ իւր վերջին շունչը փչելով հանգաւ ջահը, նրա համար անվերջ գիշեր էր։ Սկզբում, երբ նրա ոտքերումը դեռևս ոյժ կար, խարխափելով, պատերին հենուելով, շրջում էր նա իւր խուցի մէջ։ Իսկ մի քանի ժամանակից յետոյ, նա հազիւ էր կարողանում մի քանի քայլ քարշ գալ, որպէսզի վերցնէ այն մի կտոր հացը և մի բաժակ ջուրը, որը ծանր և հաստ դռան միջից բացուած փոքրիկ պատուհանից, երբէք չէր մոռանում ներս դնելու պահապանը։ Բայց արևի լոյսը այլևս գոյութիւն չունէր նրա համար... Սկզբում, բանտարկութեան առաջին օրերը, նա փորձեց երգել իւր խուցի խորհրդաւոր լռութեան մէջ, փորձեց բղաւել կատաղութիւնից, փորձեց հառաչել, երբ անտանելի խոնաւութիւնից կսկծում էին նրա մարմնի ոսկորները... Բայց յետոյ, օրեր անցնելուց յետոյ, նրան շորս կողմից շրջապատող քարե[illegible]թիւնը սարսափելի դարձրին նրա համար իւր սեփական ձայնը։ Եւ երբ նա լռում էր, ստէպ-ստէպ նրա ականջին էին հասնում ինչ որ երևակայական ձայներ... Այդ, սառը սալայատակի վրայ ընկնող արտասուքի կաթիլների աղմուկը չէր։ Նա զանազանում էր նոցա ձայնը։ Այն ձայները, որոնց լսում էր նա, լարելով իւր ամբողջ լսողութիւնը, կարծես թէ դուրս էին բղխում այդ անիծեալ լեռան խորքերից։ Նրան թւում էր, որ այնտեղ, ուրիշ խուցերի մէջ տանջւում, շարչարւում էին իւր նման ուրիշ կալանաւորները, որոնց հառաչանքները, հազիւ լսելի արձագանքների պէս, հասնում էին այստեղ, նրա խուցը, կորչում, անհետանում, ի՞նչպէս խաւարը արեգակի ճառագայթների ազդ[illegible]թեան տակ... Պատահում էր, որ գիշերները նա յանկարծ զարթնում էր իւր շուրջը լսող ինչ որ շշուկից։ Կարծես նրան շրջապատող անշարժ օդի միջից էին ծնւում այդ ձայները և, երբ կալանաւորը բարձրացնում էր գլուխը, նրան թւում էր թէ նոցա վերջին հնչիւնները դեռևս զեղզեղւում են իւր շուրջը... Նա աշխատում էր չշարժուել, պահում էր իւր շնչառութիւնը, բայց ի՞զուր... Հորս կողմը տիրում էր սոսկալի, սրտամաշ լռութիւն և այդ լռութեան մէջ նա պարզ որոշում էր իւր սրտի զարկերը, որոնք, քանի նա նիհարում էր, այնքան էլ արագանում էին... Նրան թւում

Հ.Ս.Խ.Հ. Հանրապետության Գրադարան
Պետական Հանրային Գրադարան
Հանրային Գրադարան
Հ.Ս.Խ.Հ. — 7/XI — 1922
Հ.Ս.Խ.Հ. Գրադարանի անվան
Գրադարան
Գրադարանի անվան
Գրադարանի անվան
Գրադարանի անվ

էր, որ շուտով այդ ձայները բոլորովին կլցնեն իւր խղճուկ կուրծքը և, ինչպէս իւր վանդակից աւելի մեծացած թռչուն, կըպատռէն նրան և դուրս կընետուէն... Իսկ ձայները խաւարի մէջ շարունակւում էին ծնուել և մեռնել։ Նա արդէն լսում էր նրանց ոչ թէ երազում, այլ արթուն ժամանակը, կարծես թէ նոքա այլևս չէին վախենում նրանից և կենդանի չէին համարում նրան, այլ մեռած, քարացած, ինչպէս գետնախորշի հատաքարէ պատերը, սալայատակը, սիւնը և նստարանը... Եւ միայն այդ ձայները չէր լսում կալանաւորը... Նա տեսնում էր և շատ բան, ինչ որ մինչև այժմ անմատչելի էր նրա աչքերին... Այդ, տարիների չափ երկար տեղ դիշերները, յաճախ մէջքի վրայ պառկած, աչքերը լայն բացած, նա նկատում էր, թէ ինչպէս իրեն շրջապատող խաւարի մէջ մի ինչ որ բան աւելի և աւելի թանձրանում, խտանում էր... Խտանում էր դանդաղութեամբ և մի հսկայ թեւի տեսք ընդունում։ Շրջապատող խաւարի մէջ, այդ սև թեւը սկսում էր մեղմ տարուբերուել։ Նրանից առաջացած քամու հոսանքը տարածւում էր գետնախորշում և կալանաւորը դողում էր ցրտից... Նա այլևս չէր շնչում,—նրա սառը շրթունքները մոռացել էին շնչելը։ Նա յուզած աղօթքներ էր յիշում իւր մտքումը և սև թեւի մինչև այժմ խաւարի միջից պարզ երևացող գծագրութիւնը բարակում, բարակում և վերջապէս անհետանում էր։

Եւ հեռու-հեռու, անսահման բարձրութեան մէջ, սկզբում աննշմարելի, իսկ յետոյ աւելի և աւելի որոշակի երևան էին գալիս ինչ որ չքնաղ ճառագայթներ, որոնք փոխւում էին պարզ, լուսաճաճանչ թեւերի և դանդաղ թափահարելով տարութիւն և հանգիստ էին սփռում նրա տանջւած հոգուն...

Նրա համար հաց ու ջուր բերող պահապանը այդ սառը խուցի երկուորեակն էր. նա գալիս էր և հեռանում անձայն. ոչ մի անգամ կալանաւորը չլսեց նրա ձայնը։ Նա շատ անգամ էր մտածել ինքն իրան, թէ ինչպիսի պիտի լինի պահապանի դէմքը և եկել էր այն եզրակացութեան, որ նա էլ, իրան շրջապատող ժայռի պէս, սև ու մռայլ պիտի լինի։ Կարծէս թէ անողորմ ֆէոդալի [1]) այդ ստորադրեալը քարաժայռից էր ծնւում և դարձեալ նրա խորքը մտնում, երբ այլևս հարկաւորութիւն չէր լինում։

Անողո՞ր մ...

Այո, դժբախտ կալանաւորը այդ կողմից շատ լաւ էր ճանաչում իւր իշխանաւորին և նեղումն չէր սպասում նրանից... Ցիշում էր նա, ինչպէս երեխայ ժամանակը իւր մօր հետ անցնում էր հսկայ կողերով ջրի մէջ խորասուզւած քարաժայռի մօտից։ Ինչպէս մայրը, ցոյց տա-

---

[1]) Ֆեոդալ՝--հողատէր, որին պատկանող հողը մշակում են նրա ստորադրեալ գիւղացիք։ Թագաւորը, ինչպէս բոլոր հողերի տէրը, նոյնպէս ֆեոդալ է կոչւում։

լով վայրենի քարերի մոխրագոյն զանգուածը պատմում էր նրան այդ ժայռի մէջ փորուած գետնախորշերի մասին, որտեղ շատերն էին մտել, բայց որտեղից ոչ ոք դեռևս չէր դուրս եկել։ Արդեօք վախենում էր անխիղճ սիւզերէնը, որ իւր հլու հպատակները կիմանան այդ գերեզմանների գաղտնիքները, ուր անվերջ տագնապի մէջ տանջւում էին կենդանի դիակները, թէ, ուղարկելով այնտեղ դժբախտներին, նա մոռանում էր նոցա մասին, իսկ ուրիշներն էլ չէին համարձակւում յիշեցնելու նրան։ Միայն այնտեղ, ներքևում, գիւղումը դուշակում էին կալանաւորների տանջանքները և, երբ ձմեռային երկար ու ձիգ գիշերներին ջամին էր վզվզում և խղճուկ խրճիթների պատերը հիմքերից սասանում,—մարդիկ միատեղ հաւաքւած կրակի շուրջը, շշնջում էին և պատմում նոցա տանջանքների մասին...

Երգիչը ստէպ-ստէպ տխուր մտածում էր, որ իրան ճանաչող և սիրող գիւղացիները նոյնպէս իրանց խրճիթներում հաւաքւած, պատմում էին նրա մասին և մի որևէ աղքատ մայր, անցնելով քառաժայռի մօտից իւր որդու հետ, ցոյց է տալիս նրան և ասում։

— Նայի՛ր, որդիս։ Այնտեղ, այն քարերի արանքներում տանջւում է այժմ մի թշւառ կալանաւոր... Շատ ու շատ տարիներ են անցել այն օրւանից երբ ոչ ոք չէ տեսել նրան...

— Ինչո՞ւ համար են բանտարկել նրան այն-

տեղ,—հարցնում է հետաքրքիր մանուկը։

— Որովհետև նա համարձակւել էր մեր մասին պատմելու Բոժեր թագաւորին...

— Երկա՞ր պիտի մնայ նա այնտեղ։

— Այնքան, մինչև որ նրա մարմինը այնտեղից չեն նետել ծովի փրփրալից ալիքների մէջ, որոնց այնքան սիրում էր նա...

Եւ երգիչը երևակայում էր այստեղ նայող մանկան գեղեցիկ աչքերը, ինչպէս ինքն էր մի ժամանակ այնպէս յամառութեամբ նայում ծովի վրայ կախւած զորշագոյն քարի այդ զանգուածին, կարծես նախազուշակելով իւր ճակատագիրը։

Եւ այսպես շաբաթները անցնում էին շաբաթների յետևից, տարիները՝—տարիների...

Հաւիտենական խաւարի մէջ նրա համար ցերեկը գիշերւայ չէր փոխւում, գիշերը՝—ցերեկւայ...

IV.

ՎԵՐԲԵՐԿՈՒՆ, ՃԵՂՔՈՒՐԾՔԸ ԵՒ ԸՆԿԵՐԸ.

Կալանաւորին արդէն թւում էր թէ Աստուած մոռացել է իւր երգչին... Նա նիհարել և ոյժաթափ էր եղել... Խղճուկ, պատառոտուած հագուստը հազիւ էր կարողանում ծածկել մշտնջենական խոնաւութիւնից հիւծուած նրա մարմինը։ Մեռնելը նրա համար բախտաւորութիւն կելինէր և միայն նրա վրա էր դրել իւր յոյսը. գիտէր, որ որքան էլ ուշ լինի, բայց և այնպէս լուսաճաճանչ հրեշտակը կիջնէ նրա բանտը և կրտանէ նրան իւր հետ այնտեղ, ուր չկան ոչ տանջանք և ոչ բանտեր... Եւ նրան թւում էր, որ նա այստեղ է, մօտիկ և միայն բանտի խաւարը չէ թոյլ տալիս իրան տեսնելու նրան... Կալանաւորի սրտում կարծես թէ ինչ որ ժանգոտած օղակներ էին ճռճռում։ Այժմ նա հազիւ էր կարողանում սողալ, բարձրանալ քարէ աստիճաններից, իւր բաժին մի կտոր հացի և մի գաւաթ ջրի համար և յաճախ էր պատահում, որ պահապանը գտնում էր նոցա այնտեղ, առանց ձեռք տալու... Երգիչը ինքն էլ չէր կարող ասել թէ քանի-քանի ժամերով էր մնում քարէ նստարանի վրայ պառկած, խաւարի մէջ ոչինչ

չ'տեսնող աչքերը տարածութեան մէջ հառած և ցրտից դողում։ Մի անգամ, երբ նա այդպէս պառկած կարծես քարացել էր, սանդուխտների քարէ աստիճանների վրայ ինչ որ խշշոց լսեց. կարծես թէ վերևից նոցա վրայ ինչ որ մեծ և փափուկ բան ընկաւ։ Կալանաւորը վեր ցատկեց տեղից, զգալով թէ ինչպէս գլխի վրայ մազերը բիզ-բիզ կանգնեցին։ Ի՞նչ, կամ ո՞վ կարող էր լինել այդ... Ականջը իրան քաշած, նա սկսեց ականջ դնել, բայց բացի իւր սրտի բաբախումից ուրիշ ոչ մի ձայն չըլսեց։ Արդեօք նրա հոգնած ուղեղի երևակայութեան արդիւնքը չէ՞ր այդ։ Ո՛չ, նա շատ լաւ լսեց այդ ձայնը և ոչինչ տարակուսանք չէր կարող լինել որ մի բան ընկաւ վերևից։ Եւ օդի մէջ ձեռքերը առաջ տարածելով, նա սկսեց քայլել դեպի սանդուխտները... Նա գիտէր, որ առաջ կրպատահէ քարէ սեանը, իսկ նրանից յետոյ՝—սառը աստիճաններին։ Նոցա վրայ իսկապէս մի ինչ որ բան էր ընկած։ Ոսկրացած, ուժաթափ եղած ձեռքերով նա բարձրացրեց նրան... Վերարկու էր, մեծ և փափուկ վերարկու. այնպիսին, ինչպիսին իւր հայրենիքում հագնում են ձմեռային ցրտաշունչ օրերին... Առաջ նա անգիտակցաբար փաթաթուեց նրա մէջ.—վերարկուն ծածկում էր նրան մինչև ոտները։ Ցետոյ վայրենի ուրախութեան զգացմունքը տիրեց նրա սրտին։ Ինչ որ անհրեշտ ոյժ կարծես թէ բարձրացրեց նրան վերև և տա-

բաւ իւր հետ։ Նրա գլուխը պատուում էր և, տաքութեան հետ միասին, նրա սրտումը յարութիւն առան կեանքի բնազդները... Օ՜, ուրեմն նա դեռևս մոռացած չէ, կայ մէկը, որը անխիղճ բռնակալի հրամանին հակառակ, մտածում է երգչի մասին ու, գերեզմանի մէջ փնտրելով, օգնութեան է հասել նրան... Եւ անտեսանելի բարերարի մասին մտածելը անբնական բաւականութիւն էր պատճառում նրան։ Ո՞վ կարող է լինել նա, ինչպիսի՞ մարդ է, ինչո՞ւ համար հենց միայն այժմ է մտածել նրա գոյութեան մասին, ինչպէս է մտել նրա մօտ... Արդեօք նա մէկը չէ՞ նոցանից, որոնց մի ժամանակ ճանաչելիս է եղել ինքը, թէ մի օտար մարդ է, որը, լսելով նրա տխուր պատմութիւնը, օգնութեան է եկել նրան։ Նա բարձրացնում էր վերարկուն, քսում էր երեսին,—կարծես նրա միջոցով էր ուզում իմանալ թէ ո՞վ է եղել մինչև այժմ նրա տէրը։ Բայց... Դարձեալ օրերն անցնում էին օրերի յետևից, շաբաթները՝—շաբաթների և կալանաւորը կամաց-կամաց դարձեալ ընկնում էր այն ճահճի մէջ, որի անշարժ ջրերը բարձր կանգնած էին նրա գլխավերևը...

Մի անգամ, (գիշերով էր այդ թէ ցերեկով,—նա յետոյ միայն կարողացաւ իմանալ) նա դարձեալ պառկած էր իւր նստարանի վրայ, երբ յանկարծ, տարիներով շարունակւող լռութեան մէջ, ինչ որ զրզիւն լսեց... Կալանաւորը վեր ցատկեց տեղից. նա կարծեց թէ այդ մահն է գալիս նրա մօտ, գլորւելով մայր հողի ստորերկրեայ անտեսանելի երակներովը... Նա ոտքի կանգնեց, կարծես թէ ցանկանում էր երես առ երես հանդիպել իւր, վաղուց ի վեր սպասած, ցանկալի հիւրին։ Երգիչը զգում էր նրան ոչ իւր շուրջը և ոչ իրանից բարձր, այլ իւր ոտքերի տակ, լեռան խորքումը։ Զրզիւնը գլորւեց, անցաւ դէպի մի կողմ և յանկարծ, կարծես թէ նրան փոխարինելով, յատակի սալերը, անսպասելի ալիքի զարնւող նաւի տախտակամածի պէս զողացին։ Կալանաւորը գետին ընկաւ և հասկացաւ... Մահը իսկապէս մօտեցել էր նրան... Նա արդէն շատ մօտ է. տարուբերւող գետնից ահա որտեղ որէ կըպոկւէ քարաժայռի ահագին կտորներից մէկը և իւր սոսկալի ծանրութեան տակ կըջարդէ իւր հիւանդ, հիւծւած մարմինը... Զարմանալի բան. այնքան տարիներ նա անհամբեր սպասում էր մահւան, երազելով ազատութեան այդ կարապետին, իսկ այժմ, երբ նա արդէն մօտ էր, երգիչը վախից փաթաթւել էր իւր վերարկուի մէջ և սարսափահար տարածւել սառը սալայատակի վրա։ Նրա խղճուկ սիրտը իւր զարկերով կարծես թէ վայրկեաններն էր համարում... Մի անգամ էլ լսեց ստորերկրեայ որոտմունքը և դարձեալ սլանալով գետնի անտեսանելի երակների միջով ու դէպի մի կողմը տարածւելով, կորաւ անհունութեան մէջ, մի

անգամ էլ տարուբերելով դարևոր քարաժայռը... Բայց... Կամ մահը վախեցաւ նրա անսպասելի և աննպատակ վախից, կամ թէ նա դեռևս ուղարկուած չէր նրա մօտ... Քարի ահագին գանգուածները դարձեալ մնացին նրա գլխավերևը կախուած... Իսկ երբ կալանաւորը բարձրացաւ և իւր երեսից վայր ձգեց վերարկուն, —անվերջանալի խաւարի մէջ կատարուած հրաշքից սարսափած, նա իսկոյն և եթ փակեց աչքերը...

Փակեց և վախենում էր նորից բանալ...

Իսկ եթէ այդ երազ է, եթէ այդ շքնաղ տեսիլը դարձեալ անյայտանայ և նրա տեղ դարձեալ տիրէ հաւիտենական խաւարը... Նա ցանկանում էր որքան կարելի է երկար պահել իւր տպաւորութեան մէջ այդ խափուսիկ տեսիլը... Առանց աչքերը բանալու, խարխափելով, նա յետ դարձաւ և ուժաթափ, նոր տպաւորութիւնների տակ ընկճուած, ընկաւ նստարանի վրայ։ Հաւիտենական լռութեան մէջ ծնուած այդ ձայնը և այնպէս անսպասելի կերպով երևան եկած լոյսը,—արևի լոյսը,—ամբողջովին ընդգրկել էին նրան... Բայց վերջապէս պէտք էր բանալ աչքերը—և նա բացեց... Լոյսը թափանցիկ չէր և դուրսը գիշեր էր արդեօք, թէ ցերեկ՝—նա չը-գիտէր։ Բայց պարզ էր, որ երկրաշարժը տեղահան էր արել քարէ հսկաներին և կալանաւորի դերեզմանի պատերից մէկի մէջ առաջ էր եկել մի ճեղք... Լոյսը Հազիւ-հազ ներս էր թափան-

ցում այդ ճեղքուածքից և բեկբեկւում սալայատակի վրայ... Դրանից աւել լոյսի չէին կարող դիմանալ նրա խաւարին սովորած աչքերը։ Կալանաւորը հազիւ-հազ զանազանում էր քարէ հաստ սիւնը, որի վրայ հենուած, կախուած էր նրա խուցի առաստաղը և նա ակնապիշ սկսեց փնտրել այդ սեան վրայ երկաթէ օղակը, որի մէջ դեռևս պէտք է ցցուած լինէր այն ժամանակ մարած ջահի կոթը։ Քանի տարի առաջ էր եղել այդ... Որտեղից պիտի իմանար դժբախտ երգիչը։ Գուցէ մի քանի տասնեակ տարիներ, գուցէ և միայն մէկը։ Միայնակութեան մէջ տարիներն անցնում էին րոպէների պէս,—երբ նա յիշում էր նոցա մասին և րոպէները ձգձգւում էին տարիներով,—երբ նա տանջւում էր միայնակութիւնից։ Զգուշութեամբ, կարծես թէ վախենալով, նա բարձրացաւ տեղից և սկսեց քայլել դեպի ճեղքուածքը... Ահա նա... Այո, այդ երազ չէր և ոչ էլ ցնորք... Քարաժայռը իսկապէս ճեղքուել էր և այդ ճեղքուածքից նրա դերեզմանը լոյսի հետ միասին լցւել էր թարմ, զովարար օդով, որը ներս էր թափանցում դրսից, ծովի կողմից. այնտեղից ուր թագաւորում էին կեանքն ու ազատութիւնը...

Կալանաւորը առաջին վայրկեանները իրան մինչև անգամ բախտաւոր զգաց...

Կեանքը կարծես թէ վերադառնում էր նրա մօտ և նա, հեռանալով ճեղքի մօտից, երկար

ժամանակ չէր կարողանում աչքերը հեռացնել աղօտ լոյսի շերտից։ Նրա, լոյսին անսովոր աչքերը, կամաց-կամաց սովորեցին և, մի քանի ժամից յետոյ, մի անհկարագրելի ուրախութեան և գոհունակութեան զգացմունք, տիրեց կալանաւորի սրտին։ Լոյսը կամաց-կամաց վարդագոյն դարձաւ, հետոյ ոսկէգոյն և վերջապէս ճեղքուածքից ներս թափանցեց իսկական արևի լոյսի մի նեղ շերտ։ Ուրեմն այն գիշեր էր եղել և այժմ ցերեկ դարձաւ։ Այժմ նրա համար գիշեր ու ցերեկ միախառնուած չեն լինիլ։ Ինչպէս բանտից նոր ազատուածը ուրախացած դիտում է դաշտերի կանաչը, այգիների ճոխ ծաղիկները, երկնքի կապուտակութիւնը և իւր խաղաղ ափերում հանգիստ քնած արծաթափայլ գետակը,—այնպէս էլ կալանաւորը հրճւանքով դիտում էր պարզ նշմարւող սիւնը, իւր ժանգոտած օղակով, որի մէջ դեռևս ցցւած էր ջահի կոթը։ Սիւնի կլոր շրջապատի վրայ նա, սրտի անհուն ցնծութեամբ, տեսնում էր կապոյտ ծովի, ալ վարդերի և թարմ, ցողապատ, կանաչ մարգագետինների անդրադարձումը... Դոյները յաջորդում էին միմիանց, փոփոխւում, անցնում, նորից յայտնւում, իսկ երբ մթնում էր նոքա աղօտանում էին և լուսնի լոյսը թափանցում էր բանտի մէջ հազիւ նշմարելի կաթնագոյն շերտի պէս, ինչպէս առաջին անգամը...

Այժմ նրան պակասում էր միայն մի կենդանի արարած, խաւար բանտումը մի կենդանի ընկեր։

Ճակատագիրը այդ միութիւնն էլ ուղարկեց կալանաւորին։

Մի անգամ, իւր բանտի քարերի, պատերի ու ժայռերի խոռոչները դիտելիս, նոցանից մէկի մէջ նա ինչ որ սպիտակ բան նկատեց։ Երևի այդ գիշերը, կամ առաւօտեան էր յայտնւել նա այնտեղ, որովհետև առաջ նա երբէք չէր տեսել նրան։ Գիտէր, որ այնտեղ մի խոնաւ անկիւն կայ, որտեղ քարերի արանքներից միշտ ջրի կաթիլներ էին հոսում։ Նա թեքւեց դէպի սպիտակ բիծը, աշխատելով ոչքան կարելի է լաւ դիտել նրան. նրա առաջ, ժայռի ճեղքուածքներից մէկի միջից, դուրս էր ցցւել մի գորշագոյն սունկ. մէկը նոցանից, որոնք ծնւում և մեռնում են խոնաւ գետնայարկերի և խուցերի հաւիտենական խաւարի մէջ։ Բարակ և թոյլ բունը հազիւ էր կարողանում պահել սունկի լայնիզը զլխի ծանրութիւնը։ Նա տատանւեց իւր վրայ թեքւած մարդու շնչառութիւնից, իսկ այդ մարդը սարսափից քար կտրեց, վախենալով կորցնել իւր ընկեր այդ միակ կենդանի արարածին, որին վիճակւած էր այսուհետև բաժանելու նրա հետ բանտարկութեան ամբողջ սարսափը... Այժմ նա այլևս չէր հեռանում նրա մօտից։ Նրան թւում էր, թէ տեսնում է սունկի հետզհետէ աճելը, տեսնում է, թէ ինչպէս կա-

մաց-կամաց երկարանում և ուժեղանում է նրա բունը, ինչպէս հաստանում և լայնանում է նրա գլուխը։ Այժմ, ժայռի ճեղքուածքից ներս թափանցող լոյսի շերտը և այդ անսպասելի կերպով երևան եկած հիւրը ընդգրկել էին նրա ամբողջ միայնակութիւնը և նա միայն մի բանից էր վախենում, որ չլինի թէ նրա բանտի պատերից դուրս գտնուող մարդիք գուշակեն և գան փակելու ճեղքուածքը ու պոկելու թշուառ սունկը... Նա արդէն, առանց վախենալու որ կրկոտրէ սունկի բունը, շոշափում էր վերջինիս գլուխը և, նրա թաւշանման թաց մաշկը շոշափելով, նա այնպիսի բաւականութիւն էր ստանում, որ կարծես թէ զգում էր կողքին իւր չափազանց սիրելի էակներից մէկին... Եւ այսպէս, բանտի մինչև այժմ գերեզմանային խաղաղութիւնը կամաց-կամաց կեանք էր ստանում. թէև խղճուկ, բայց կալանաւորի համար անփոխարինելի կեանք...

V

ԷԿԻՈՐ ՀԻԻՐ.

Շատ անգամ կալանաւորին թւում էր, որ ժայռի այդ փոքրիկ ճեղքուածքից լսում է և՛ ժայռի մօտից սլացող քամու վզզոցը և՛ նրա ստորոտին զարնուող ալիքների խուլ դղրդիւնը։ Արդեօք նրա զրգռուած երևակայութեան մէջն էին ծնուում այդ ձայները, թէ իրականութիւնն էր ծնում նոցա,—նա չըգիտէր այդ. միայն, երբ շունչն իրան քաշած, երկչոտ սրտով մօտենում էր փոքրիկ ճեղքուածքին, թւում էր նրան, թէ լսում է ձկնկուլների զիլ, բայց հազիւ այնտեղ հասնող աղաղակները։ Երևակայութիւնը նկարում էր նոցա ազատ, համարձակ, ծովի փոթորկալի ալիքների վրայից արագութեամբ թռչելիս։ Նա կարծես թէ տեսնում էր այդ սպիտակ թռչուններին, որոնք իրանց թևերով պատռում էին ծովի փրփրալից ալիքները և, սուր ճանկերով աւարը բռնած, բարձրանում էին բարձր, բարձր, դէպի կապուտակ երկնքի անսահմանութիւնը... Ամբողջ ժամերով նա կանգնում, կամ պառկում էր այդ ճեղքուածքի առաջ։ Եւ մի բան, որ այժմ տանջում էր նրան, այդ

իւր անօգուտ անցկացրած կեանքն էր։ Ինչու՞ համար է այդպէս երկար տանջւում նա։ Ու՞մ, կամ ինչ՞ մի մեծ ճշմարտութիւն հաստատելու համար է այդ մեծ զոհը։ Ինչու՞ համար էր գրւած նրա սրտում աստուածային պարգև այդ երգը, երբ նա վաղուց էր ջնջւել մարդկանց յիշողութիւնից, իսկ ինքը դեռևս տանջւում, չարչարւում է այստեղ, այլևս ոյժ չունենալով կենդանացնելու նրան։

Այժմ, երբ նա այլևս միայնակ չէր, երբ ժամանակ առ ժամանակ լոյսի թոյլ ճառագայթը վանում էր նրա չորս կողմը տիրող խաւարը, կալանաւորի մէջ դարձեալ զարթնում էր նախկին պօէտը...

Թող նա տանջւելով մեռնէ, թող ոչ ոք չյիշէ նրա անունը և նրա ամենամօտիկ բարեկամները մոռանան նրան,—նա արդեն վաղուց է հաշտւել այդ մտքի հետ։ Բայց նա ուզում է որ իւր երգը ապրէ... Այն երգը, որը,—ինչպէս մի ժամանակ տեսել էր ինքը,—արտասուքի կաթիլներ էր դուրս բերում հնադարեան և սպառնալի ամրոցի դաժան զինւորների աչքերից... Նա յիշում է, որ մինչև անգամ թագաւորի մուայլ դէմքի վրայ էլ ինչ որ աննկատելի ժպիտ էր երևում և նրա աչքերը այնպէս չարութեամբ չէին նայում, երբ նա իւր տաւիղի միջոցով ներդաշնակութեամբ երգում էր նրա համար սիրոյ վեհ պատիրանները, որոնց ինքը, Աստուած էր

դրել մարդկային սրտի մէջ։ Եւ երգչին թւում էր թէ իւր երգի ամեն մի վանկը յամառութեամբ զարկւում է թագաւորի քարացած սրտին...

Իսկ այժմ... Ո՞վ է երգում այդ երգերը...

Գուցէ գտնւել է մի շողոքորթ երգիչ, որը իւր աստուածային պարգևը ծախում է թագաւորին, ինչպէս այն ժամանակ շողոքորթ քարոզիչը... Մի գուցէ նա, կալանաւորին ծանօթ դահլիճի կամարների տակ, փառաբանում է ոյժի և չարութեան յաղթանակը և, ինչպէս սինիօրի դահլիճները այնտեղ, նեղքևում, կոխկրտում են արտերը, կրակի ճարակ դարձնում սնամեղ գիւղերը,—այնպէս էլ նա, այդ ազատ պօէտը, իւր քաղցրաձայն երգովը ծաղրում է աղքատութեան և տանջանքների սրբութիւնը։ Իսկ իւր երգը, մի ժամանակ նոցա ծառայած կալանաւորի երգը, վաղուց մեռած և մոռացած է... Օ՜, եթէ այդպէս է, թող անիծեալ լինի այն աստուածային պարգևը, որով հպարտանում էր ինքը, այն ոյժը, որը ստիպում էր նրան մոռանալու իրան, արձագանք տալով իւր Աստծու զօրեղ կոչին...

Մի անգամ, երբ խորասուզւած այդ տխուր մտածմունքների մէջ, պառկած էր նա իւր քարէ նստարանի վրայ, բացւեց բանտի դռան փոքրիկ պատուհանը, բայց ոչ այնպէս, ինչպէս սովորաբար բացւում էր, այլ անդին ազմուկով և մի ինչ որ անծանօթ ձայն կանչեց նրան։

— Էյ՜ դու, աւազակ, ինչպէս է անունդ։ Վերցրու, թափառաշրջիկ, հացդ ու ջուրդ։

«Երևի պահապանը փոխել են»,—անցաւ ապշած կալանաւորի մտքովը և հազիւ էր նա բարձրացել իւր տեղիցը, երբ լսեց դռան կողմից նոր ձայներ... Պատուհանից հեռանալով, պահապանը սկսեց երգել... Կալանաւորը իսկոյն ճանաչեց այդ երգը.

Հազար փառք նրանց, որոնք աշխատանք
Չեն խնայել երբէք գթառատ հողին,
Ով բանուկ մեղու՝ գործել է անհագ
Եւ ոչ ձրիակեր ծնուել փեթակին։
Ագնիւ աշխատանք բերում է գործին
Հունձ աջող դաշտից և ժողովրդին
Հպարտ, համարձակ, ազատ ոգի, օր.
Կորով կուի մէջ, տանն՝ կեանք անդորը...
Կարծես փայլակը լուսաւորեց պօէտին...

Նա մոռացած է, վաղուց մոռացած. պահապանը անուանեց նրան «թափառաշրջիկ, աւազակ», այն պահապանը, որը երգում էր նրա երգը...

Ուրեմն նրա երգը յարութիւն է առել և ապրում է։ Ապրում է այն ժամանակ, երբ ինքը մեռնում է այստեղ։ Այո՛, երգը ապրում է։ Ապրում է այս պատերի և խաւարի ջիգրու։

Եւ ո՞վ է երգում նրան,—իւր բանտապահը։

Եւ պիտի երգեն սերունդից սերունդ այնքան, «որքան ցանկալի կըլինի Աստծուն և կը-

համբերէ մայը երկիրը»։

Այո՛, երգը յարութիւն է առել, նշանակում է որ նրա տանջանքները, նրա վշտերը անպտուղ չեն անցել...

Երևի միայն մի օրով էր այդ պահապանը փոխարինել իւր ընկերոջը...

Վաղը, միւս օրը, յետոյ շարունակ շաբաթներ, ամիսներ, առաջւայ պէս անձայն, առանց աղմուկի, բացւում էր փոքրիկ պատուհանը և նրանից յետոյ երկար ու մութ միջանցքներում ոչ մի ձայն չէր լսւում...

Բայց կալանաւորի համար այժմ միևնոյն էր։

Նրան թւում էր, որ միայն իւր մարմինն է գամւած այդ պատերին, փակւած նկուղում։

Իսկ հոգին, երգի հետ միասին, ազատ ու ամենակարող, թռչում է, անցնում ամբողջ տիզերքը։

VI.

ԲԱՅԻԵՅ.

Դարձեալ օրերն անցնում էին օրերի յետեւից, շաբաթները—շաբաթների։

Մի անգամ պահապանը լուռ ու մտախոհ, ինչպէս միշտ, բացեց փոքրիկ պատուհանը որպէսզի կալանաւորի համար հաց և ջուր դնէ այնտեղ, բայց նա դեռևս չէր վերցրել էրէկանը։ Այդպիսի դէպքեր շատ էին պատահել և այդ պատճառով նա փոխեց ամբողջ օրը մնացած ուտելիքը և հեռացաւ։ Միւս օրը կրկնուեց նոյնը, երրորդ օրը՝— նոյնպէս։ Չորրորդ օրը նա գնաց Բօժեր թագաւորի մաժորդոմի [1]) մօտ։ Պալատի գիրուկ կառաւարիչը անտարբերութեամբ լսեց պահապանի ասածները և իսկոյն և եթ մոռացաւ։ Բանը նրանումն էր, որ ինքը Բօժերն էլ հիւանդ պառկած էր իւր ճոխ, մետաքսապատ անկողնումը, շրջապատուած բժիշկներով։ Նա նոր էր խոստովանուել իւր պալատական քահանային։ Բօժերը լաւ յիշողութիւն չունէր և պարզ է, որ [illegible]ոստովանելուց մոռացել էր մութը խուցերում [illegible]ողներին։ Ասենք նա այդ մեղք էլ չէր հա[illegible] պատժում էր նոցա, իրանց մեղքե-

[1]) [illegible]դոմ՝--պալատի կառավարիչ։

րի համար և ուրիշ ոչինչ։ Ծեր զինուորը երկրորդ անգամ չընդհատեց մաժորդոմի մօտ գնալու. նա գիտէր, որ դրա համար իրան կրվանդեն այնտեղից... Իսկ հացն ու ջուրը առաջուայ պէս մնում էին առանց ձեռք տալու պօէտի պատուհանի մօտ... Մի անգամ, ծեր զինուորը մինչև անգամ ձայն տուեց, բայց միայն խուլ արձագանքը պատասխանեց նրան...

Եւ այդ ձայնը կորաւ կալանաւորի համար...

Մի քանի օր էր, ինչ նա անշարժ պառկած էր իւր նստարանի վրայ, մթնաշաղի մէջ աչքերը լայն բացած և նոյն իսկ չէր շրջում իւր գլուխը դէպի քարաժայռի ճեղքուածքից ներս թափանցող լոյսի ճառագայթները։ Նրան այլևս հարկաւոր չէին լոյսի այդ խղճուկ ճառագայթները, որովհետև նա ամբողջովին շրջապատուած էր մի այնպիսի փայլուն, այնպիսի հրաշալի լոյսով, ինչպիսին չէր տեսել մինչև անգամ այն ժամանակ, երբ շնչում էր իւր հայրենեաց լեռների օդովը։ Նա լայն բացել էր աչքերը և երջանկութեան ժպիտը սառել էր դէմքին, որը երկար ժամանակ խոնաւ օդի մէջ մնացած մագաղաթի պէս դեղնել, գունատուել էր։ Նրա շրթունքները կիսաբաց էին, իսկ ձեռքը կրծքին սեղմած, կարծես վախենում էր, որ նրա հիւանդոտ թոթոռումները կարող էին խանգարել իւր երջանկութեանը...

Ատուած յիշել էր երդչին և, ուղարկել ն[illegible]

մօտ իւր ազատարար հրեշտակին... Նրա սպիտակ լուսաճաճանչ թևերը ծածկել էին և սիւնի դորշագոյն գանգուածը, նրանից կախուած ժանդոտ օղակով և խոնաւ պատերը և բանտի սև ու մութ կամարները, որտեղ դեռևս թանձրացած էր խաւարը, որը այն ժամանակ տեղի էր տուել ճեղքուածքից ներս թափանցող լոյսի թոյլ ճառագայթներին... Կալանաւորին թւում էր, թէ այդ թևերը վառւում են փայլուն բոցերով։ Նա գիտէր, որ սպիտակափառ հրեշտակը ուղարկուած է բանալու նրա բանտի դռները, որ այնտեղ, այդ դռների յետևում, սպասում է նրան ցանկալի ազատութիւնը... Նա հաւատացած էր, որ եթէ հրեշտակը ձեռք տայ դռներին, նոցանից կրթափւեն երկաթէ փականքները ու փեղկերը, ինչպէս շարժուած ճիւղից թափւում են անձրևի կաթիլները...

— Ժամանակ է,—ասաց նա հրեշտակին։ Իսկ հրեշտակը հեզութեամբ ժպտում էր...

— Ժամանակ է,—կրկնեց նա, զգալով որ գլուխը տրաքւում է, քունքերը այրւում են նրա մէջ մնացած արեան վերջին կաթիլներից, իսկ սիրտը ուժգին բաբախում է, սպասելով ինչ որ մեծ բանի, զգալով որ ահա որտեղ որ է կըզայ ազատութիւնը, որին դողդողալով սպասում, ցանկանում էր նրա ամեն մի երակը, նրա ամբողջ էութիւնը...

Կալանաւորը չէր կարողանում բարձրացնել

ձեռքը, չէր կարողանում շարժել իւր քարէ նստարանի վրայ։ Նրա մարմինը այնքան նիհարել, այնքան ուժաթափւել էր, որ այլևս չէր կարողանում պահել տանջուած երգչի ազատ հոգին... Միայն նրա գլխումը դեռևս ինչ որ մտքեր էին պտտւում և նա կարծում էր թէ նոքա իւր մէջ չեն ծնւում, այլ լուսաճաճանչ հրեշտակն է ասում նրան...

— «Այո, քո երգը չի մեռնիլ... Մարդիք մոռացել են քեզ և, յիշելով քո անունը, ոչ ոք չի ցաւիլ քեզ համար. բայց այն, ինչ որ դու մի անգամ ընդ միշտ երգեցիր արքայական դահլիճի ծանր կամարների տակ, դարերով կապրէ և սերունդից սերունդ կերգւի։ Եւ նրա ձայների մէջ քո հոգին կապրէ այնքան ժամանակ, մինչև որ նա կձուլւէ ճշմարտութեան և սիրոյ յաղթական խմբերգի հետ... Եւ այն ժամանակ կըփոխւէ աշխարհը և այն բոլորը, ինչ որ երազում էին երգիչները և ինչ որ ամբոխը խենթային ցնորքներ էր համարում՝—իրականութիւն կըդառնայ... Այո, կըգայ այդ ժամանակը և դու քո երգով աւելի ևս մօտեցրիր նրան ցաւատանջ մարդկութեանը... Կըգայ այդ օրը և այն ժամանակ այժմեան մութ ու խաւար «կեանքի նպատակը» տեղի կըտայ մի ուրիշ աւելի փայլուն, աւելի վեհ նպատակի։ Տեղի կըտայ և յետ կը նահանջէ, ինչպէս մղձաւանջը փայլուն արեգակի առաջին ճառագայթների տակ»։

— Իսկ ինչ կլինի այն ժամանակ...

— Առաջայ պէս անձայն հարցրեց պօէտը։ Հրեշտակը ժպտալով ասաց նրան.

— Նայիր։

Նրա թևերի փայլուն, տեսողութիւն չոյող լոյսը դողդողաց, նա տարածեց իւր ձեռքերը դէպի բանտի խաւար պատերը, որոնք կարծես թէ միանգամից սկսեցին յետ քաշուել, լայնանալ։ Առանց գլուխը շրջելու, առանց դէս ու դէն նայելու կալանաւորը տեսնում է իրեն շրջապատող այդ հրաշքը... Պատերը յետ-յետ են քաշւում և կամաց-կամաց լայնանում, տարածւում... Առաստաղը կարծես թէ գնում է կորչելու անսահման հորիզոնի անհունութեան մէջ։ Վայրենի քարի սև զանգուածները կարծես թէ փոխւում են կապուտակ երկնքի։ Մի քանի վայրկեան ևս, և գետնախորշի ժայռերից ոչինչ չ'մնաց... Կորան նրա պատերը, աներևոյթացաւ քարէ սիւնը իւր ժանգոտ օղակով միասին, կարծես գետնի տակ մտան յատակի ճեղքուած քարերը. իսկ ինքը, կալանաւորը, կարծես թէ իւր քարէ նստարանի վրայ չէ պառկած, այլ նստած է հրեշտակի լայն տարածուած, թևերի վրայ... Աստուած իմ, ինչպիսի վիթխարի, չքնաղ երկիր է տարածուած նրա ոտքերի տակ...

— Նայիր, տես որտեղ են ֆէօդալների ահաւոր ամրոցները,—ասում է նրան հրեշտակը...

Բանաստեղծը սաւառնում է այժմ ինչ որ

լեռների գագաթների վրայից... Նոցա վրայ, շրջապատուած ցողապատ կանաչներով, դեռևս կանգուն էին մնացել ինչ որ ամրոցների խղճուկ մնացորդներ... Աշտարակների ատամնաձև պատերը վաղուց էին խորտակուել։ Փշրուել էին նոցա ամուր կամարները և պատերը, ֆէօդալական իշխանների այդ յուսալի ամրութիւնները, աղբակոյտերով թափուած էին այստեղ և այնտեղ, իսկ նոցա մէջ սողում էին օձերը ու, իրանց զմրուխտէ աչքերը արեգակի ճառագայթների տակ փայլեցնելով, վազվզում չարաճիճի մողեսները... Աշտարակների մէջ բնակութիւն էին հաստատել բուերն ու չղջիկները... Եւ միայն մղձաւանջներ ծնող գիշերն էր զարթեցնում նոցա և իւր թևերը տարածելով ամրոցների մնացորդների վրայ, մինչև լուսաբացը կեանք տալիս նոցա...

— Ցիշում ես դու այն գիւղը, որտեղ տանջւում, լալիս էր քո երգած ժողովուրդը։

Բանաստեղծը փնտրում է նրան...

Մթթէ այդ նա է,—կապոյտ ծովածոցի ափերում տարածուած այն գեղատեսիլ քաղաքը։ Մթթէ այն հեզահամբոյր, ծովածաւալ ալիքները նրա մօտ են տանում այն հարիւրաւոր մեծ ու փոքր նաւերը։ Մթթէ այն բախտաւոր, ժպտադէմ և ազատ մարդիքը այն մարդկերանց որդիքն են, որոնք սիւզերէնի ահաւոր աչքերից փախչում, թաղնւում էին իրանց կիսավայրենի, խղճուկ խրճիթներումը։ Իսկ այն չքնաղ աղջիկները, այն

յոյս ու հաւատով լի երիտասարդները...

Եւ շարունակ բարձր ու բարձր էր սաւառնում հրեշտակը և աւելի լայն էր բացւում կալանաւորի աչքերի առաջ բախտաւոր երկրի սահմանները։ Յանկարծ բանաստեղծը զգաց ինչ որ անախորժ հոտ. թարմ, նոր թափուած մարդկային արեան՝ ռունգերը գրգռող հոտ...

— Այս ի՞նչ է,—հարցնում է նա տխրամած հրեշտակին։

— Ժառանգութիւն։ Խաւար անցեալից մնացած, բարբարոսաբար, վերջին ժառանգութիւնը։Միայն նա է մինչև այժմ ապրում այս երկրում...

— Պատերազմը։

— Այո։ Նա դեռևս պահպանում է իւր գոյութիւնը աշխարհիս վրայ, թէև ծածկւում է ուռուցիկ խօսքերի դիմակով... Այժմ մարդիք զէնքով պաշտպանում են իրանց օջախը նրանցից, որոնք նոյնպէս, հրով և սրով ճշմարտութեան և սիրո վեհ ուխտն են տարածում... Գիշատչութեան ինստինքտները այժմ ծածկւում են հեզ պատիրաններով։ Նոքա այժմ աշխարհ չեն գալիս այնպէս, ինչպէս գոյութիւն ունէին այն ժամանակ... Բայց դու մայր երկրի չքնաղ խմբերգի մէջ զանազանում ես արդեօք կռւի աղաղակները... Նոքա կորչում են նրա մէջ։ Նոքա չեն կարող յաղթել տիեզերքի չքնաղ օրհներգին... Լսի՛ր այդ օրհներգը։

Եւ նա սկսեց ականջ դնել։

Սկզբում աններդաշնակ ձայները, —այդպէս էր թւում նրան,—միանում, մի ոգևորուած երգ էին դառնում և այդ երգի խօսքերը տարածւում էին միմիանց յետևից.

Հազա՞ր փառք նրանց, որոնք աշխատանք
Չեն խնայել երբէք գթառատ հողին,
Ով բանուկ մեղու՝ գործել է անհագ
Եւ ոչ ձրիակեր ծնւել փեթակին։
Ազնիւ աշխատանք բերում է գործին
Հունձ աջող դաշտից և ժողովրդին
Հպարտ, համարձակ, ազատ ոգի, օր.
Կորով՝ կռւի մէջ, տանն կեանք անդորը...

— Քեզնից յետոյ հազարաւոր երգիչներ են երգել այդ երգը... Սկզբում նոցա խլացնում էին փողերի հնչիւնները, թմբուկների զարկերը և կռւի աղաղակները... Նոքա կորչում, անյայտանում էին, բայց նոցա տեղը բռնում էին նորերը աւելի թարմ ոյժերով. և, տեսնում ես, այժմ ազատութեան այդ օրհներգի ձայների մէջ խլանում, կորչում են մի ժամանակ յաղթական, իսկ այժմ՝—յաղթահարուած չարութեան նշաբանները...

Եւ այդ երգի հետ միասին, աւելի՛ ու աւելի՛ վեր, դէպի անսահման կապուտակ բարձրութիւն էր սլանում պօէտի հոգին...

VII

ԵՐԿՈՒՈՒՔ ՄԻԱՍԻՆ.

Մեռաւ ծեր Բօժերը...

Նրա գթառատ և հիւանդոտ կինը խկոյն և եթ հրամայեց բանալ ստորերկրեայ բանտերի ծանր դռները։

Նիհար, տանջուած ու կիսամեռ դրութեան մէջ էին դուրս գալիս այնտեղից կալանաւորները... Նոցա անուններն անգամ մոռացուած էին... Իսկ երբ այդ մասին հարցնում էին իրանցից՝—շատերը, որոնք արդէն կորցրել էին գիտակցութիւնը, չէին կարողանում մտաբերել..,

Երբ բացուեցին այն խուցի դռները, որտեղ կենդանի թաղուած էր երգիչը,—այնտեղ, քարէ նստարանի վրայ, միայն նրա անչափ նիհարած դիակը գտան...

Իսկ նրա դէմքը կարծես թէ ապրում էր դեռ։

Նա ժպտում էր. և այդ ժպիտը այնպիսի երջանկութեամբ էր շնչում, որ նրա վրայ նայող կապելլանը [1]) և մաժորդոմը այլայլուած յետ դարձան և հեռացան դիակի մօտից։

Մեծահոգի թագուհին, մինչև հողին յանձնելը, հրամայեց մի եկեղեցում դնել իր ամուս-

[1]) Կապելլան՝--կաթոլիկ պալատական եկեղեցու քահանայ։

նու և նրա երգչի դիակները։ Ամեն կողմից հեռաքրքիր մարդիք էին գալիս մնաս բարեաւ ասելու ֆէօդալական իշխանաւորի ահիւնին և ամենքն էլ, ակամայ կարդում էին նրա դէմքի վրայ կեանքի վերջին ըոպէին նրան տիրած սարսափի արտայայտութիւնը. Նրա դիմագծերը ծռմռուած էին, իսկ գունաթափ շրթունքների ծայրերում կարծես թէ սառել, քարացել էր օրհասական յուսահատ աղաղակը։ Իսկ նրա կողքին, երջանկութեամբ և ուրախութեամբ լի, հեզ ժպտում էր բանաստեղծի դէմքը...

— Ո՞վ է այս հանգուցեալը,—հարցրեց փոքրիկ մանուկը, որը իւր մօր հետ միասին եկել էր նայելու մեռեալներին։

— Չըդիտեմ, բայց երևի այնտեղ,—աչքերը դէպի երկինք բարձրացնելով պատասխանեց մայրը,—նա աղօթում է իւր սինեօրի հոգու համար և այդ պատճառով էլ Աստուած թողութիւն է շնորհում նրա մեղաւոր հոգուն։

ՎԵՐՋ.

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՔ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

1. ԿԱՐՄԻՐ ԳԴԱԿԸ. պատմուածք Լէօի գինն է 3 կ.
2. ՍԻՐՈՅ ԶՈՀԵՐ. պօէմա Շերամի ,, 3 ,,
3. ԿԵՆԴԱՆԱՅԱԾ ԵՐԳԸ. պատմուածք Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկօի, թարգմ. Վ. Թումանեան . . . . . ,, 10 ,,

---

Գումարով՝—25% զեղչ, ճանապարհածախսը մեզ վրայ։

Դիմել՝ *Баку, Армянск. Человѣколюб. О-во*
В. А. Туманяну.

ՏՊԱԳՐՈՒՄ Է.
ՎԷՐՔԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԲԺՇԿԵԼԸ
(նկարներով)
Բժ. Վ. Տէր-Գրիգորեանի։

«Ազգային գրադարան»
NL0312801

12.325

ԿԱՐԵԼԻ Է ՍՏԱՆԱԼ.

ԲԱԳՈՒ՝—«Սոտրուդնիկ» գրավաճառանոցում:
ԹԻՖԼԻՍ՝—«Գուտտենբերգ», «Կենտրոնական» և «Կովկասեան» գրավաճառանոցներում:
,, —Յովհաննէս Գեանջեանի մօտ, «Թիֆլիսի Նաւթ. Ընկ.» գրասենեակում:
ԳԱՆՁԱԿ՝—Արշակ Միսկարեանի գրավաճառանոցում:
,, —Մ. Համաոիլուի մօտ, գեղավաճառանոց Բալասանեանցի:
,, —Բ. Բայլիալեանի մօտ, Դոնդուկովսկայա փողոց:
ՁՈՒՇԻ՝—Բագրատ Տէր-Սահակեանի գրավաճառանոցում.
,, —օր. Հայկանոյշ Դավլաթեանի մօտ:
ԿՐԱՍՆՈՎՈԴՍԿ՝—Յարութիւն Մեհրաբեանի մօտ:
ՂԸԶԸԼ-ԱՐՎԱԴ՝—Արժ. Մարկոս քահ. Տէր-Մկրտչեանի մօտ:
ԱՍԽԱԲԱԴ՝—Արժ. Թադէոս քահանայ Ատոմեանի մօտ.
ՄԵՐՎ՝—Արժ. Աղէքսանդր քահ. Պոպովեանի մօտ.
ՁԱՐԺՈՅ՝—Արժ. Ներսէս քահ. Աբրամեանի մօտ: